

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



2025 (2-ին ԿԻՍԱՄՅԱԿ)

Քաղաքացիական գործերով իրավական դիրքորոշումներ

Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ/1279/02/19 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է տարածակետ վճարմամբ պարտավորության նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու հարցին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն՝ եթե մեկ պայմանագրի հիման վրա առաջանում են երկարատև և շարունակական պարտավորություններ, որոնք պետք է կատարվեն պարբերաբար (օրինակ՝ ամսական վճարումներով), ապա թեև այդ վճարումները ուղղված են մեկ ընդհանուր պարտավորության մարմանը, սակայն յուրաքանչյուր վճարում համարվում է ինքնուրույն պարտավորություն, քանի որ պայմանագրով դրա համար սահմանված է առանձին և հստակ կատարման ժամկետ: Հետևաբար, յուրաքանչյուր ամսական վճարման դեպքում պարտատերը տվյալ վճարման ժամկետի լրանալուց հետո արդեն կարող է պարզել՝ արդյոք պարտավորությունը կատարվել է, թե ոչ, և այդ պահից ունի իրավական հնարավորություն պահանջելու տվյալ պարտավորության կատարումը կամ դրա խախտման հետևանքների վերացումը: Այս հիմքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը պետք է հաշվարկվի յուրաքանչյուր պարտավորության առանձին կատարման ժամկետի լրանալուց հետո, այլ ոչ թե ամբողջ պարտավորության ընդհանուր մարման վերջնաժամկետից: Այսինքն՝ մեկ պայմանագրով նախատեսված, բայց տարբեր ժամկետներով ենթակա պարտավորությունների դեպքում, հայցային վաղեմությունը սկսվում է յուրաքանչյուր առանձին պարտավորության կետանցի պահից:

Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/10781/02/23 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Նախքան հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննությանն անցնելը դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերով նախատեսված գործողությունները չկատարելն արդյո՞ք դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում է, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի (հարցի) սխալ լուծման:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ քանի դեռ դատարանը չի պարզել հայցի առարկան, դրա փաստական ու իրավական հիմքերը և վիճելի իրավահարաբերության բնույթը, անհնար է արդյունավետորեն կազմակերպել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ ապացուցման գործընթացը և ճիշտ գնահատել, մասնավորապես, ընդհանուր կամ հատուկ վաղեմության ժամկետի կիրառելիությունը: Նախնական դատական նիստում նշված պարտադիր գործողությունների չկատարումը հանգեցնում է նախապատրաստական փուլի նպատակային նշանակության արժեզրկմանը և գործի հետագա քննության արդյունավետության նվազմանը, այն դեպքում, երբ այդ գործողությունները փոխկապակցված են և ենթակա են համապարտադիր կատարման՝ առանց դատարանի հայեցողության:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/35748/02/20 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ պահանջով գործին մասնակից չդարձած անձ համայնքների կողմից դատական ակտը բողոքարկելու հնարավորության հարցին՝ պայմանավորված գույքի իրավական կարգավիճակով:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ դատարանի մատչելիության իրավունքը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ անձն ունի իր իրավունքներին միջամտող դատական ակտը բողոքարկելու իրական հնարավորություն, այդ թվում՝ երբ ակտը վերաբերում է գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին և պարտականություններին: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերջիններիս դատական պաշտպանության իրավունքը դրսևորվում է դատական ակտի բողոքարկմամբ, սակայն այն բացարձակ չէ և ենթակա է կիրառման միայն այն դեպքում, երբ ակտը առնչվում է տվյալ անձի իրավունքներին ու պարտականություններին: Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ՝ գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների վերաբերյալ կայացված դատական ակտերը խախտում են կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքները և չեն կարող համարվել օրինական ու հիմնավորված, ինչի համատեքստում վերաքննիչ դատարանը պարտավոր է բողոքը վարույթ ընդունելիս գնահատել ակտի առերևույթ ազդեցությունը բողոք բերող անձի իրավունքների վրա:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ2/7636/02/23 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Ներկայացված հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը հայտ ներկայացրած մասնակցի կողմից թերի շտկելը կարող է արդյոք գնահատվել որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում և հիմք հանդիսանալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանի մեկնաբանությամբ՝ գնման գործընթացին մասնակցող անձի պարտականությունը ներառում է ոչ միայն օրենքով և հրավերով սահմանված փաստաթղթերի ներկայացումը, այլ նաև գնահատման հանձնաժողովի արձանագրած անհամապատասխանությունները շտկելու նպատակով պահանջված փաստաթղթերի սահմանված կարգով և ժամկետում ներկայացումը: «Փաստաթղթեր չներկայացնելու» կարգի խախտումը դիտարկվում է միայն այն դեպքում, երբ մասնակիցը չի ներկայացնում պահանջված փաստաթղթերը կամ ներկայացնում է ակնհայտ անհամապատասխան փաստաթղթեր: Եթե մասնակիցը փաստացի ներկայացնում է փաստաթղթեր, սակայն դրանք ըստ հանձնաժողովի գնահատման թերի են կամ ունեն նոր շեղումներ, ապա դա չի համարվում «չներկայացնելու» խախտում և չի կարող արգելք հանդիսանալ հայտի ապահովման պարտականության կամ մասնակցության համար:

Վճռաբեկ դատարանի թիվ ՀԿԴ/0004/02/22 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է քրեական գործի նախաքննության ընթացքում վճարված գումարից հայցապահանջի հիմքում ընկած վնասի հատուցմանը՝ պարտավորության առաջացման համար անհրաժեշտ հիմքերի բացահայտման համատեքստում:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կրկնակի բռնագանձումը բացառելու նպատակով գործի քննության ընթացքում դատարանները պարտավոր են գնահատել՝ արդյոք քրեական վարույթի շրջանակում կատարված վճարումը փաստացի ուղղված է հայցի հիմքում ընկած վնասի հատուցմանը, թե ոչ: Անկախ նրանից՝ հատուցումը կատարվել է անձի նախաձեռնությամբ, թե դատարանի որոշմամբ, այն պետք է գնահատվի՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացուցման և ապացույցների գնահատման կանոններով:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0190/02/13 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը անդրադարձել է վերաքննիչ դատարանի կողմից վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննություն իրականացնելու և համապատասխան դատական ակտ կայացնելու լիազորության իրավական հարցին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը հանդիսանում է անձի սեփականության և արդար դատաքննության իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք: Դրա հիմնական նպատակն է վերացնել դատական սխալի արդյունքում կայացված և արդեն իսկ կատարված ակտի նյութական հետևանքները՝ վերականգնելով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած իրավական ու գույքային դրությունը (restitutio in integrum): Այս գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է երկու պայմանի միաժամանակյա առկայություն. նախ՝ գործով կայացված վճիռը պետք է փաստացի ի կատար ածված լինի, և երկրորդ՝ այդ վճիռը պետք է բեկանվի իրավասու դատարանի կողմից, որին հաջորդում է հայցի մերժումը, վարույթի կարճումը կամ հայցն առանց քննության թողնելը: Ըստ սահմանված կարգի՝ վճռի կատարման շրջադարձի հարցը, որպես կանոն, լուծում է այն դատարանը, որը կայացրել է գործն ըստ էության լուծող վերջնական կամ նոր դատական ակտը: Այն դեպքերում, երբ նոր ակտ կայացրած դատարանն իր որոշմամբ չի անդրադարձել այս հարցին, պարտապանն իրավունք ունի ներկայացնել առանձին դիմում: Վճռաբեկ դատարանը հատուկ շեշտադրում է, որ «նոր դատական ակտ կայացրած դատարան» ձևակերպումը ներառում է ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարանը՝ կախված նրանից, թե որ ատյանն է կայացրել գործը եզրափակող վերջին որոշումը: Այսպիսով, վճռի կատարման շրջադարձը պետության պոզիտիվ պարտականությունն է՝ ուղղված անձի նյութական վնասների հատուցմանը և արդարադատության վերջնական նպատակների իրականացմանը:

Վճռաբեկ դատարանի թիվ ՍնԴ/1489/04/21 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյոք անհրաժեշտ է, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքում պարտապանի բաժինը գույքի համասեփականատիրոջն ուղղակի վաճառելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդության քննարկումը նախապես կատարվի պարտատերերի ժողովում կամ խորհրդի նիստում, և արդյոք դատարան ներկայացվող միջնորդությանը պետք է կցվի այդ մասին ժողովի կամ խորհրդի համաձայնությունը:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Գույքի համասեփականատերերն ունեն պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող՝ գրավի առարկա չհանդիսացող գույքում պարտապանի բաժինն այդ գույքի շուկայական գնահատված գնի՝ պարտապանի բաժինն համապատասխան արժեքով գնելու նախապատվության իրավունք, և գնելու նախապատվության իրավունքից օգտվելու ցանկության դեպքում այլևս անհրաժեշտ չէ պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի համաձայնության առկայությունը:

Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/47547/02/21 քաղաքացիական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հարկադիր պարապուրդի և այդ ժամանակահատվածի համար աշխատողին վարձատրելու անհրաժեշտ պայմանների բացահայտմանը՝ ոչ աշխատողի մեղքով իր աշխատանքային պարտականությունները կատարելու անհնարինությունը գնահատելով բարեխիղճ ու ողջամիտ գործելու սկզբունքի, աշխատանքային իրավունքների չարաշահման արգելքի համատեքստում:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատանքային հարաբերությունները հիմնված են կողմերի ազատ կամահայտնության և փոխադարձ պարտավորությունների վրա, որտեղ թե՛ աշխատողը, թե՛ գործատուն պարտավոր են գործել բարեխղճության ու ողջամտության սկզբունքներին համապատասխան: Այս համատեքստում հարկադիր պարապուրդը դիտարկվում է որպես աշխատողի մեղքից անկախ ստեղծված այնպիսի իրավիճակ, երբ վերջինս օբյեկտիվ պատճառներով զրկված է իր աշխատանքային պարտականությունները կատարելու հնարավորությունից: Քանի որ աշխատողին պայմանագրով նախատեսված աշխատանքով ապահովելն ու այն կազմակերպելը գործատուի պատասխանատվությունն է, ապա ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակահատվածի համար աշխատողն ունի վարձատրություն ստանալու իրավաչափ ակնկալիք: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը շեշտում է, որ պարապուրդի համար վարձատրություն բռնագանձելու անհրաժեշտ նախադրյալը հենց դրա հարկադիր բնույթն է, ինչը ենթադրում է աշխատողի մեղքի բացակայություն: Աշխատողի կողմից իրավունքների իրացման և պարտականությունների կատարման ընդհանուր ցուցիչը բարեխղճությունն է, ուստի պարապուրդի առաջացման հարցում անձի մեղավորությունը պարզելիս դատարանները պետք է գնահատեն, թե արդյոք աշխատողը ցուցաբերել է բավարար հոգածություն և շրջահայացություն՝ աշխատանքի շարունակականությունն ապահովելու համար: Եթե պարզվում է, որ աշխատողը կարող էր իրավաչափ վարքագծով խուսափել պարապուրդից, սակայն չի արել դա առանց խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքների, ապա նման պարապուրդը չի կարող համարվել հարկադիր և ենթակա չէ վճարման: Այսպիսով, վարձատրության իրավունքը ծագում է միայն այն դեպքում, երբ աշխատանքից մեկուսացումը տեղի է ունեցել աշխատողի կամքից անկախ և չի հանդիսացել նրա ոչ բարեխիղճ վարքագծի կամ ներքին կարգապահական կանոնների խախտման հետևանք:
-

Վարչական գործերով իրավական դիրքորոշումներ

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4099/05/23 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելու արդյունքում՝ հիմնավորված ու պատճառաբանված դատական ակտ կայացնելու օրենսդրական պահանջի պահպանման հարցին, սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում պատասխանել այն հարցադրմանը, թե արդյո՞ք հսկիչ գնման (գնումների) ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ արձանագրությունը և հսկիչ դրամարկղային մեքենա (այսուհետ նաև՝ ՀԴՄ) սարքի «Z» հաշվետվությունը բավարար ապացույցներ չեն տնտեսվարողի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու իրավախախտման փաստն արձանագրելու համար:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը շեշտում է, որ ՀԴՄ սարքի տեխնիկական հիշողությունից դուրս բերվող «Z» հաշվետվությունն ունի օբյեկտիվ և ավտոմատացված բնույթ, քանի որ ձևավորվում է առանց մարդկային միջամտության: Չնայած այն հանգամանքին, որ հարկային տեսուչը կարող է «Z» հաշվետվությունը դուրս բերել միայն տնտեսվարողի թույլտվությամբ և հանձնարարագրի ներկայացումից հետո, այն հանդիսանում է անհերքելի ապացույց օրվա ընթացքում կատարված գործարքների վերաբերյալ: Ըստ դատարանի դիրքորոշման՝ հարկային մարմնի կազմած արձանագրությունը և «Z» հաշվետվությունը միասին հանդիսանում են բավարար ապացույցներ, որպեսզի ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը որակվի որպես հարկային իրավախախտում: Հետևաբար, այս երկու փաստաթղթերի առկայությունը հիմք է տնտեսվարողի նկատմամբ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված տուգանքների կիրառման համար՝ ապահովելով հարկային հսկողության արդյունավետությունն ու օրինականությունը:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ5/0061/05/22 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը վճարելու՝ գործատուի պարտականության կատարման սահմաններին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանի մեկնաբանությամբ՝ աշխատակիցը, անօրինականորեն աշխատանքից ազատվելու դեպքում, իրավունք ունի հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար ստանալ միջին աշխատավարձ, անկախ նրանից՝ այդ ընթացքում աշխատել է այլ գործատուի մոտ, թե ոչ: Այս մոտեցումը կիրառելի է մինչև 2023 թվականի հուլիսի 31-ը ծագած վեճերի դեպքում: Սակայն, 31.07.2023-ից հետո ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների շրջանակում, եթե աշխատակիցը նույն գործատուի մոտ այդ ընթացքում կատարել է այլ աշխատանք, ապա վերջինս վճարման ենթակա միջին աշխատավարձից պետք է հանվի այդ աշխատանքի դիմաց արդեն ստացած վարձատրության չափը: Այսպիսով, այդպիսի դեպքերում դատարանը պարտավոր է պարզել՝ արդյո՞ք հարկադիր պարապուրդի ընթացքում աշխատակիցը կատարել է այլ աշխատանք նույն գործատուի մոտ, և եթե այո՝ միջին աշխատավարձը նվազեցվում է համապատասխան չափով:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6934/05/21 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորող օրենսդրական ակտերի կիրառման համատեքստում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված արարքի զանցակազմն առկա է այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցով մաքսային սահմանը հատելու ժամանակ մաքսային մարմնի պաշտոնատար անձի՝ հայտարարագրման ենթակա ապրանքների առկայության մասին բանավոր հարցմանն ի պատասխան անձը հայտնում է այդպիսի ապրանքների բացակայության մասին:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Եթե անձը մաքսային սահմանը հատելիս բանավոր հարցմանն ի պատասխան չի ներկայացնում ուղևորային մաքսային հայտարարագիր, ապա դա համարվում է հայտարարություն այն մասին, որ նա չունի հայտարարագրման ենթակա ապրանքներ: Այսինքն՝ անձը փաստացի հայտնում է, որ չունի հայտարարագրման պարտավորություն: Այդուհանդերձ, եթե մաքսային մարմինը կասկածում է, որ նման ապրանքներ կան, ապա իրավասու է իրականացնել մաքսային հսկողության միջոցառումներ՝ այդ թվում զննում կամ տեխնիկական միջոցների կիրառում: Եթե արդյունքում հայտնաբերվում են թաքցված ապրանքներ, որոնք հնարավոր չէր տեսնել սովորական տեսողական զննմամբ, ապա դա համարվում է մաքսային կանոնների դիտավորությամբ խախտում, և անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության: Վճռաբեկ դատարանը հաստատում է, որ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով (Արտագնա մաքսային ստուգման անցկացման նպատակով մաքսային մարմնի պաշտոնատար անձանց մուտքն ստուգվող անձի օբյեկտ) նախատեսված իրավախախտումը առկա է այն դեպքում, երբ անձը, մաքսային սահմանը հատելիս, հայտարարում է, որ չունի հայտարարագրման ենթակա ապրանքներ, սակայն իրականում դրանք թաքցրել է՝ օգտագործելով հայտնաբերման համար դժվարամատչելի եղանակներ:
-

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0324/05/23 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Պարտավորեցման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի քննության առանձնահատկությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու՝ մասնավորապես՝ մատնանշման միջոցով ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու առաջարկ ներկայացնելու օրենսդրական պահանջը կատարելու անհրաժեշտությանը:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Այն դեպքում, երբ վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով և ժամկետում անձի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում, ապա հայցվող բարենպաստ վարչական ակտը de jure համարվում է ընդունված, ինչը նշանակում է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը համարվում է եզրափակված, որից հետո վարչական մարմինն այլևս իրավասու չէ նույն դիմումի առնչությամբ կայացնել որևէ որոշում՝ քանի դեռ ֆիկտիվ վարչական ակտի իրավաչափության հարց օրենքով սահմանված կարգով չի բարձրացվել և դրան լուծում չի տրվել: Ըստ այդմ՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելու մասին հայցվորի պահանջը մերժելու մասին միջամտող վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում ընդունված լինելու փաստի բացակայությունն ինքնին բացառում է պարտավորեցման հայց ներկայացնելու իրավական հնարավորությունը, քանի որ բացակայում է պարտավորեցման հայց ներկայացնելու պարտադիր նախապայմաններից մեկը՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին վարչական ակտը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո ընդունված հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին վարչական ակտը չի կարող հիմք հանդիսանալ պարտավորեցման հայցի քննության համար, քանի որ վարչական վարույթի առավելագույն ժամկետը լրանալուց հետո վարչական մարմինն այլևս իրավասու չէ տվյալ դիմումի առնչությամբ ընդունել վարչական ակտ: Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտավորեցման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու դատավարական սկզբունքից բխող՝ գործի լուծման համար անհրաժեշտ փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն ուղղված համարժեք միջոցներ ձեռնարկելու արդյունքում պարզելով, որ վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով և ժամկետում անձի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացրել, դատարանը պարտավոր է մատնանշման միջոցով առաջարկել հայցվորին ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինելու պատշաճ հայցատեսակով:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/7238/05/22 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք հարկ վճարողի կողմից կատարված հնարավոր իրավախախտման վերաբերյալ երրորդ անձի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված բողոքը կարող է դիտվել որպես բավարար հիմք՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածով սահմանված հսկիչ գնում իրականացնելու համար:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Անդրադառնալով հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ երրորդ անձանց կողմից հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու՝ օրենսդրի կողմից սահմանված հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ երրորդ անձինք անմիջական մասնակցություն ունեն հարկային հարաբերությունների ձևավորմանը, ինչպես նաև վերջիններս կրում են հարկային ողջ գործընթացների ուղղակի ազդեցությունը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ երրորդ անձանց կողմից ներկայացված տեղեկությունը պետք է բավարար լինի հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջները հարկ վճարողի կողմից խախտելու հավանականությունն արձանագրելու համար: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկային մարմինը, երրորդ անձից ստանալով հարկ վճարողի կողմից կատարված որևէ հնարավոր խախտման վերաբերյալ տեղեկություն, պետք է գնահատման առարկա դարձնի այդ տեղեկությունը, որից հետո հարկ վճարողի մոտ օրենսդրական պահանջների խախտման ռիսկի վերաբերյալ եզրահանգման գալու պարագայում կարող է հարկային հսկողության շրջանակներում Հարկային օրենսգրքով նախատեսված հիմքով հսկիչ գնում իրականացնել:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1076/05/17 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ վարչական մարմնի վերակազմակերպման դեպքում դատավարական իրավահաջորդության առանձնահատկություններին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Դատարանը եզրակացրել է, որ երբ առկա է դատավարական իրավահաջորդության հիմք՝ Օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն, դատարանը պարտավոր է իր նախաձեռնությամբ ապահովել կողմի փոխարինումը իրավահաջորդով: Այս պարտականությունը տարածվում է բոլոր ատյանների դատարանների վրա՝ կախված այն հանգամանքից, թե դատավարության որ փուլում է ուժի մեջ մտել նոր պետական մարմնի կանոնադրությունը: Վարչական մարմնի վերակազմակերպման դեպքում դատարանը պարտավոր է հաշվի առնել «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածի կարգավորումները, ըստ որոնց վերակազմակերպումը տեղի է ունենում օրենքով, իսկ իրավահաջորդ մարմնի կանոնադրության ուժի մեջ մտնելու պահից դատարանի պարտավոր է փոխարինել նախորդ մասնակցին իր իրավահաջորդով:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3836/05/21 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք արտադրական, այլ առևտրային և հասարակական նպատակային նշանակության շինություններով չծանրաբեռնված (ազատ) հողամասի օտարման գործարքը ՀՀ հարկային օրենսգրքի՝ վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի իմաստով կարող է դիտարկվել ձեռնարկատիրական գործունեության առարկա գույքի օտարում և դրա հիման վրա ծագել եկամտային հարկի հաշվարկման և վճարման պարտականություն:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 147-րդ հոդվածի իրավակարգավորումներից բխում է այն մոտեցումը, ըստ որի՝ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտը հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտ դիտելու նախապայմանն այդ գույքի ձեռնարկատիրական գործունեության առարկա չհանդիսանալն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հողամասը ծանրաբեռնված է որևէ շինությամբ, ապա այդ հողամասի օտարումից ստացվող եկամուտը որպես հարկվող եկամուտ կամ նվազեցում տարբերակելու համար ելակետային է տվյալ հողամասի վրա գտնվող շենքի, շինության նպատակային նշանակությունը, քանի որ շենքը, շինությունը, հողամասի հետ կազմելով մեկ ընդհանուր անբաժանելի գույքային միավոր, կանխորոշում է դրա ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսանալու (չհանդիսանալու) հանգամանքը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոդվածի քննարկվող պայմանին համապատասխան՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող շենքով, շինությամբ, այն է՝ արտադրական, այլ առևտրային և հասարակական նպատակային նշանակությամբ շենքով, շինությամբ ծանրաբեռնված հողամասը՝ անկախ վերջինիս նպատակային նշանակությունից, պայմանավորված դրա վրա գտնվող շենքի, շինության ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվելու հանգամանքով, պետք է դիտարկվի որպես ձեռնարկատիրական գործունեության առարկա, և վերջինիս համար պետք է առաջանա եկամտային հարկի հաշվարկման և վճարման պարտականություն: Մինչդեռ այն դեպքում, երբ հողամասը ծանրաբեռնված չէ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի իմաստով ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող շենքով, շինությամբ, այն է՝ արտադրական, այլ առևտրային և հասարակական նպատակային նշանակությամբ շենքով, շինությամբ, ապա, անկախ վերջինիս նպատակային նշանակությունից, տվյալ հողամասի համար չպետք է առաջանա եկամտային հարկի հաշվարկման և վճարման պարտականություն:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6031/05/23 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք պարտավորեցման հայցը կարող է համարվել թույլատրելի և ենթակա լինել դատարանի քննությանն այն պարագայում, երբ վարչական մարմնի կողմից դրսևորվել է անգործություն, այն է՝ օրենքով սահմանված ժամկետում չի ընդունվել վարչական վարույթը եզրափակող որևէ վարչական ակտ, ինչով պայմանավորված առկա է ֆիկցիայի ուժով բարենպաստ վարչական ակտն ընդունված համարելու իրավական նախադրյալ, որը կարող է քննարկման առարկա դառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտավորեցման հայցը կարող է համարվել թույլատրելի և ենթակա լինել դատարանի քննությանը միայն այն պարագայում, երբ վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում կայացրել է հայցվող բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու մասին միջամտող վարչական ակտ, մինչդեռ այն դեպքում, երբ վարչական մարմնի կողմից դրսևորվում է անգործություն, այն է՝ օրենքով սահմանված ժամկետում չի կայացվում վարչական վարույթը եզրափակող որևէ վարչական ակտ, որպիսի հանգամանքով պայմանավորված առկա է լինում ֆիկցիայի ուժով բարենպաստ վարչական ակտն ընդունված համարվելու իրավական նախադրյալ, ապա պարտավորեցման հայցը չի կարող համարվել թույլատրելի և ենթակա լինել դատարանի քննությանը, քանի որ այդ դեպքում դատական պաշտպանության ճիշտ եղանակը կարող է հանդիսանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայցը: Հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտ օրենքով սահմանված ժամկետում չկայացվելու դեպքում թույլատրելի հայցատեսակ է հանդիսանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայցը, որն ինքնին բացառում է պարտավորեցման հայց ներկայացնելու, այն վարույթ ընդունելու և գործի քննություն իրականացնելու իրավական հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4965/05/22 վարչական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նախապատվության իրավունքի ճանաչման հիմքով պետության և համայնքների սեփականության հողամասն ուղղակի վաճառքով օտարելու իրավակարգավորման առանձնահատկություններին:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Միայն նախապատվության իրավունքի ճանաչումը բավարար չէ հողամասի օտարումը տվյալ անձին երաշխավորելու համար, քանի որ այդ իրավունքը պարզապես առաջնահերթություն է այլ հավանական գնորդների նկատմամբ, ոչ թե հողամասը ձեռք բերելու անբեկանելի իրավունք: Հետևաբար, պետական կամ համայնքային մարմնի կողմից հողամասը օտարելու կամքի բացակայության պայմաններում գնման նախապատվության իրավունքը չի կարող գործնական կիրառություն ունենալ: Այս իրավունքը դառնում է կիրառելի միայն այն դեպքում, երբ համապատասխան մարմինը որոշում է հողամասը օտարել:

Քրեական գործերով իրավական դիրքորոշումներ

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ1/0048/13/24 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Որոշք են մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հիմքով անձին պատժից ազատելու ինստիտուտի կիրառման նախապայմանները, ինչպես է քրեական օրենսդրությամբ սահմանվում մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետները՝ հաշվի առնելով նշանակված պատժատեսակն ու պատժաժամկետը, և ի՞նչ իրավական հետևանքներ է առաջացնում դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելը վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման և դրա երկարաձգման առումով:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու ինստիտուտին, իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ վերոնշյալ ինստիտուտը գործադրելու համար, ի թիվս այլնի, անհրաժեշտ պայմաններ են հանդիսանում մեղադրական դատավճռին ի կատար ածելու համար քրեական օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետի լրացած լինելը, ինչպես նաև նշված վաղեմության ժամկետի ընդհատված կամ կասեցված չլինելը: Ընդ որում՝ քրեական օրենսգրքով ամրագրված նոր իրավակարգավորումներով օրենսդիրը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետները սահմանում է՝ հաշվի առնելով ոչ թե անձի կողմից կատարված հանցագործության տեսակը, այլ հիմք է ընդունում հանցագործության կատարման համար անհատապես անձի նկատմամբ նշանակված պատժատեսակը և պատժաժամկետը: Ավելին՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետը հավասարեցվում է նրա նկատմամբ նշանակված պատժի ժամանակահատվածին: Այլ կերպ, ներկայումս գործող իրավակարգավորումը չի որոշակիացնում և հստակ չի սահմանում քննարկվող ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ վաղեմության ժամկետները: Ինչ վերաբերում է քննարկվող ինստիտուտի շրջանակում վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման առանձնահատկություններին, ապա ՀՀ գործող քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի տրամաբանությունը կայանում է նրանում, որ դատապարտյալի կողմից հիմնական պատիժը կրելուց խուսափելու դեպքում, մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետի ընթացքը ենթակա է կասեցման մինչև դատապարտյալի ձերբակալման, մեղայականով ներկայանալու կամ խուսափելը դադարեցնելու պահը: Միայն վերոնշյալ պայմանների ի հայտ գալու դեպքում կարող է վերսկսվել դատապարտյալի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետի ընթացքի հաշվարկը՝ անկախ այն հանգամանքից, թե որքան է տևել անձի կողմից պատիժը կրելուց խուսափելու և վաղեմության ժամկետի ընթացքը կասեցված լինելու ժամանակահատվածը: Ավելին՝ կասեցման պարագայում, անձի նկատմամբ նշանակված պատժաժամկետին հավասարեցված վաղեմության ժամկետը երկարաձգվում է նույն պատժաժամկետի մեկ երկրորդի չափով: Այսինքն՝ գործող իրավակարգավորումը պատիժը կրելուց խուսափող դատապարտյալի համար որդեգրել է առավել խիստ մոտեցում: Բացի այն, որ դատավճռի վաղեմության ժամկետի կատարման ընթացքի համար ամրագրված չեն որոշակի և հստակ ժամկետներ, այլև վերջինի կողմից պատիժը կրելուց խուսափելու դեպքում այն երկարաձգվելու է դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժաչափի մեկ երկրորդով, ընդ որում այն կարող է հոսել միայն պատժի կրումից խուսափող դատապարտյալի ի հայտ գալու պահից սկսած:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0597/01/20 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Ինչպես է դատարանը գնահատում պաշտոնեական լիազորությունների անցման հանցակազմի շրջանակում ոչ գույքային վնասի «էական» լինելը և ինչպես է պետք է հիմնավորի դրա դրսևորումը գործի կոնկրետ հանգամանքներով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման համար:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պաշտոնեական լիազորությունների անցման հանցակազմին, իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ պաշտոնեական լիազորությունների անցման հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող՝ անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված ոչ գույքային վնասը որպես էական գնահատելը կախված է գործի կոնկրետ հանգամանքներից, և յուրաքանչյուր դեպքում անձին մեղսագրված արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայությունը հավաստելու համար պետք է փաստել ոչ միայն էական վնասի առկայությունը, այլև այն, թե տվյալ գործով կոնկրետ ինչում է վերջինս դրսևորվել: Այլ կերպ՝ դատական ակտ կայացնելիս դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է կատարի գործի կոնկրետ հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրություն՝ էական վնասի առկայության կամ բացակայության փաստը պատճառաբանված եզրահանգումների տեսքով արձանագրելու համար:
-

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ1/0315/01/23 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Կարո՞ղ է փորձաքննության ընթացքում կիրառված Ռուսաստանի Դաշնության ստանդարտը համարվել «օրենք», և արդյո՞ք դրա կիրառումը որպես տեղեկատու աղբյուր հանգեցնում է փորձագետի եզրակացության թույլատրելիության կասկածի տակ դրմանը:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով փորձաքննության եզրակացության բովանդակությանը և հիմնավորվածությանը, մասնավորապես՝ ՌԴ ստանդարտերի կիրառելիությանը՝ ընդգծել է, որ փորձաքննության կատարման ընթացքում օգտագործված՝ Ռուսաստանի Դաշնության ստանդարտը չի կարող համարվել «օրենք», քանի որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ հիշյալ ստանդարտը, գիտական աղբյուրների հետ մեկտեղ, վարույթով կիրառվել է ոչ թե որպես հանցակազմը սահմանող օրենսդրական ակտ, այլ փորձագետի կողմից օգտագործվել է որպես տեղեկատու գրականություն, հետևապես նշված ստանդարտի օգտագործումը չի ենթադրում փորձաքննության կատարման կարգի այնպիսի էական խախտում, որը կբացառեր փորձագետի եզրակացությունը որպես թույլատրելի ապացույց օգտագործելու հնարավորությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ1/0029/18/23 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Արդյո՞ք մինչդատական ակտի վիճարկման վարույթը կարճելու մասին որոշումը, լինելով իրավական հետևանքներով համարժեք վարույթի հարուցումը մերժելու մասին որոշմանը, պետք է ունենա դատական բողոքարկման հնարավորություն՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ մինչդատական ակտի վիճարկման վարույթը կարճելու մասին որոշումն իր առաջացրած իրավական հետևանքներով հավասարազոր է վարույթի հարուցումը մերժելու մասին որոշմանը, որի բողոքարկման հնարավորությունը, ի տարբերություն վարույթը կարճելու մասին որոշման, ուղղակիորեն նախատեսված է քրեադատավարական օրենքով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ բողոքի ըստ էության քննությունը բացառելու հանգամանքով պայմանավորված՝ վարույթը կարճելու մասին որոշումը խոչընդոտում է դատական պաշտպանության իրավունքի իրացմանը, սակայն օրենսդիրն այդ որոշման՝ հատուկ վերանայման կարգով բողոքարկման ուղղակի հնարավորություն չի նախատեսել՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով անձի՝ դատական պաշտպանության մատչելիության համատեքստում վարույթը կարճելու մասին որոշումը կայացնելու հիմքերի առկայության կամ բացակայության հարցը դատական կարգով բողոքարկելու իրավունքը, ինչն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների հետ:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ/0129/01/20 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Ինչպե՞ս է գործում դատավճիռների համակցման կանոնը, և արդյո՞ք այն կիրառելի է միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պայմանով, հաշվի առնելով մեղադրյալի կողմից նոր արարքի կատարման հանգամանքը և անմեղության կանխավարկածի սկզբունքը:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հանցանքների և դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնների հարաբերակցությանը՝ ընդգծել է, որ դրանց տարբերակման հիմքում ընկած է անձի դատապարտման՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի առկայության հանգամանքը: Նշվել է նաև, որ դատավճիռների համակցության կանոնի կիրառման համար բավարար է միայն մեղադրյալի կողմից նոր արարք կատարելը՝ իր նկատմամբ արդեն իսկ մեկ այլ դատավճիռ կայացված լինելու պայմաններում, անկախ այն հանգամանքից՝ նշված դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, թե ոչ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածը չի նախատեսում դատավճռի օրինական ուժի մեջ մտած լինելու պարտադիր պայման: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատավճռի օրինական ուժի մեջ մտած լինելու պայմանի բացակայությունը պատահական չէ, քանզի պատիժ նշանակելու առավել խիստ կանոնի կիրառման հիմքը պետության անունից անձի արարքին տրված բացասական իրավական գնահատականից՝ մեղադրական դատավճիռ կայացնելուց հետո, վերջինիս կողմից իր ենթադրյալ հանցավոր վարքագիծը շարունակելն է: Ընդ որում, օրենսդրի նշված տրամաբանությունը չի հակասում անմեղության կանխավարկածի սկզբունքին, քանի որ խոսքն ընդամենը պատիժ նշանակելու վերաբերելի կանոնի կիրառման մասին է, ինչն ամենևին չի զրկում անձին իր նկատմամբ կայացված դատավճռի բողոքարկման հնարավորությունից: Հետևաբար, հնարավոր այն մեկնաբանությունը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառումը հնարավոր է միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պայմաններում, հակասում է ինչպես օրենքի տառացի մեկնաբանմանը, այնպես էլ դրա էությանը և օրենսդրի կամքին:
-

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/1157/01/19 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Ինչպե՞ս է սահմանվում ՀՀ գործող քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցանքը «որակյալ» համարելու նախապայմանը, և ի՞նչ պետք է հասկանալ «առարկան կամ միջոցը նախապես պատրաստելը կամ հարմարեցնելը» մարմնական վնասվածք պատճառելու նպատակով:
- **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ նախկին օրենսդրությամբ հանցանքը որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարելը համարվում էր հանցակազմը ծանրացնող հանգամանք՝ ինքնին այդպիսի առարկայի օգտագործման փաստով: Մինչդեռ գործող քրեական օրենսդրությամբ օրենսդիրը նեղացրել է այդ որակյալ հանգամանքի բովանդակությունը՝ որպես ծանրացնող հանգամանք դիտարկելով միայն այն դեպքերը, երբ հանցանքը կատարվել է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ: Վճռաբեկ դատարանը պարզաբանել է, որ տվյալ որակյալ հանգամանքի առկայությունը ենթադրում է ոչ թե առարկայի կամ միջոցի պարզապես օգտագործում, այլ հանցագործի կողմից որոշակի նախապատրաստական գործողությունների իրականացում՝ ուղղված առարկան կամ միջոցը մարմնական վնաս պատճառելու համար պիտանի դարձնելուն: Այդ համատեքստում դատարանը կարևորել է ինչպես անձի սուբյեկտիվ ընկալումը, այնպես էլ վերջինիս կողմից կատարված օբյեկտիվ գործողությունների բնույթը: Դատարանի մեկնաբանմամբ՝ «առարկան կամ միջոցը պատրաստել» նշանակում է ցանկացած գործողություն, որի արդյունքում ստեղծվում կամ ստացվում է մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստ առարկա կամ միջոց, իսկ «հարմարեցնելը» ենթադրում է արդեն գոյություն ունեցող առարկայի կամ միջոցի նկատմամբ կառուցվածքային կամ գործառնական փոփոխությունների իրականացում՝ այն ավելի արդյունավետ կամ հարմար դարձնելու նպատակով: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված որակյալ տեսակը անձին մեղսագրելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ առևանգումը կատարվել է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0372/01/24 քրեական գործով որոշում

- **Քննարկման ենթակա հարցը.** Ի՞նչ նախապայմաններ և պահանջներ կան ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով հանցակազմը կազմելու համար, և ինչպիսի՞ օրինական հիմք պետք է ունենա տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ իրավունքը կասեցված անձի վիճակն՝ քրեական պատասխանատվություն ենթարկվելու համար:
 - **Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի տարրերը, արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասի գործողության նախապայմանը և այդ հոդվածով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքը՝ նրա վարչական պատասխանատվության ենթարկված լինելն է՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկվելը կամ վարելու իրավունքը կասեցվելը: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկվելը կամ այդ իրավունքը կասեցնելը պետք է լինի օրենքով սահմանված կարգով, այն է՝ իրավաչափ վարչական ակտի հիման վրա: Հակառակ պարագայում, եթե վարչական ակտը կայացվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ և վարչական կամ դատական կարգով անվավեր է ճանաչվել, ապա քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը բացակայում է, քանզի վերանում է քրեական պատասխանատվության ենթարկվելու պարտադիր նախապայմանը՝ օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկված լինելը: Անդրադառնալով քննարկվող հանցակազմի սուբյեկտին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այն հատուկ է, քանի որ բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, անձը պետք է օժտված լինի նաև լրացուցիչ հատկանիշներով, այն է՝ լինի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից օրենքով սահմանված կարգով զրկված կամ վարելու իրավունքը կասեցված ֆիզիկական անձ: Արդյունքում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունն արձանագրելու համար, անհրաժեշտ է հիմնավորել, որ անձը տրանսպորտային միջոցը վարել է՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված լինելու պայմաններում, որպիսի հանգամանքը պետք է հաստատված լինի իրավաչափ վարչական ակտով:
-

Սահմանադրական դատարանի որոշումներ

ՍԴՈ-1791` Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին մասի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով

- **Քննության շրջանակը.** Արդյո՞ք ՀՀ Դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած «իրավունք ունի» ձևակերպումը ենթադրում է հայեցողություն՝ նոր հանգամանքի հիմքով վերանայելու կամ չվերանայելու Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումն այն պայմաններում, երբ Դիմողի նկատմամբ այդ որոշմամբ կիրառված օրինադրույթը Սահմանադրական դատարանի որոշմամբ ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող՝ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ, այսինքն՝ համապատասխան օրինադրույթը Դիմողի նկատմամբ կիրառվել է Սահմանադրական դատարանի որոշման մեջ նշված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:
 - **Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.** Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն որպես իրավական պետության հիմք և մարդու իրավունքների գերակայության երաշխիք: Դրանց կատարումը չի կարող դիտարկվել միայն ձևական-իրավական տեսակետից. դրանք պետք է անվերապահորեն իրականացվեն: Սահմանադրական դատարանը ընդգծում է, որ եթե իր որոշմամբ որևէ նորմ ճանաչվում է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կամ եթե այն դիմողի գործով կիրառվել է դատարանի մեկնաբանությունից տարբերվող ձևով, ապա այդ հիմքով ընդունված դատական ակտը ենթակա է վերանայման՝ որպես նոր հանգամանք: Ընդ որում՝ անթույլատրելի է ցանկացած տեսակի մեկնաբանողական գործիքակազմի կիրառմամբ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման վարույթը որպես իրավասու դատարանի հայեցողություն դիտարկելը՝ ի միտն ունենալով գաղափարն առ այն, որ գոյության իրավունքից զուրկ է այն դատական ակտը, որի հիմքում ընկած է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթը կամ համապատասխան դրույթին տրված մեկնաբանությունը, որը տարբերվում է Սահմանադրական դատարանի կողմից դրան տրված մեկնաբանությունից: Միաժամանակ, ՍԴ-ն շեշտում է, որ անթույլատրելի է վերանայման գործընթացը դիտարկել որպես իրավասու դատարանի հայեցողության հարց, երբ առկա է Սահմանադրությանը հակասող կամ սխալ մեկնաբանությամբ կիրառված նորմ: Գործի շրջանակներում խնդիր է ծագել 157-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած «իրավունք ունի» ձևակերպման հարցում, որի մասով ՍԴ-ն նշում է՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման վերանայման դեպքում, երբ առկա է նման նոր հանգամանք, «իրավունք ունի» ձևակերպումը նշանակում է ոչ թե ընտրություն, այլ պարտադիր լիազորություն՝ համապատասխան որոշումը վերացնելու և նորը կայացնելու համար: Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու պարագայում Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած «իրավունք ունի» ձևակերպումը նախանշում է Խորհրդի հայեցողությունը՝ գնահատելու և որոշելու օրենքով սահմանված բավարար հիմքերի առկայությունը՝ վերանայման վարույթ հարուցելու համար, սակայն հիշատակված հիմքերի առկայությունը հավաստվելու դեպքում Խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումը նոր հանգամանքի հիմքով ըստ էության վերանայելու պարագայում «իրավունք ունի» ձևակերպումը միաթեքորեն նշանակում է Խորհրդին վերապահված պարտադիր կատարման ենթակա լիազորություն:
 - **Սահմանադրական դատարանի եզրակացությունը.** Սահմանադրական դատարանը որոշեց՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումը Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով ըստ էության վերանայելը (որոշումը վերացնելը և նոր որոշում կայացնելը) Բարձրագույն դատական խորհրդի պարտադիր լիազորությունն է:
-

ՍԴՈ-1802` Ալեքսանդր Սահակյանի դիմումի հիման վրա` ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության` Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով

- **Քննության շրջանակը.** Հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշման` վերաքննության կարգով անբողոքարկելիության սահմանադրականության գնահատումը:
- **Սահմանադրական Դատարանի դիրքորոշումը.** Սահմանադրական դատարանը նշում է, որ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու դատավարական գործողությունը իր էությամբ միավորում է և՛ հայցի ապահովումը վերացնելու, և՛ նոր հայցի ապահովում կիրառելու գործողությունները: Օրենսգրքի 361-րդ հոդվածը սահմանում է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա առաջին ատյանի դատարանի որոշումների շրջանակը, որոնց թվում են հայցի ապահովում կիրառելու, հակընդդեմ ապահովում կիրառելու մերժման, ինչպես նաև հայցի ապահովումը վերացնելու վերաբերյալ որոշումները: Այս որոշումների բողոքարկելիության նախատեսումը պայմանավորված է հայցի ապահովման ինստիտուտի նպատակով և դրա՝ անձի իրավունքների վրա ունեցած զգալի ազդեցությամբ: Թեև օրենսդիրը բառացիորեն չի առանձնացրել հայցի ապահովման միջոցը փոխարինելու կամ ձևափոխելու մասին որոշումները, դրանք բովանդակորեն ընդգրկվում են 361-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման մեջ: Սակայն իրավակիրառ պրակտիկայում դատարանների կողմից տառացի մեկնաբանության հետևանքով նման միջնորդությունների մերժման վերաբերյալ որոշումները ճանաչվել են ոչ բողոքարկելի:
- **ՍԴ-ի եզրակացությունը.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ այն ձևափոխելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:

ՍԴՈ-1797` Մարինե Կարյանի և Անժելա Ասրիբաբայանի դիմումի հիման վրա` ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի` Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով

- **Քննության շրջանակը.** Արդյո՞ք Օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասը, որը դատարանին թույլ է տալիս չբեկանել դատական ակտը՝ այն գործի ելքի վրա էական ազդեցություն չունենալու հիմնավորմամբ, համահունչ է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին՝ Եվրոպական դատարանի համապատասխան ակտի առկայության պայմաններում նոր հանգամանքով դատական ակտի վերանայման իրավունքի ապահովման համատեքստում:
 - **Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.** Սահմանադրական դատարանը նշում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումը պետք է ինքնաբերաբար հանգեցնի կոնվենցիոն խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով այն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը: Հետևաբար, այն իրավակարգավորումը, որը թույլ է տալիս չբեկանել դատական ակտը՝ դրա՝ գործի ելքի վրա չազդելու հիմնավորմամբ, չի համապատասխանում Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության և միջազգային մարմիններին դիմելու իրավունքներին: Սահմանադրական դատարանը ընդգծում է, որ նոր հանգամանքի հիմքով վերանայման ինստիտուտը պետք է հիմնված լինի մարդու արժանապատվության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքի վրա: Հակառակ մոտեցումը հակասում է իրավունքի գերակայության և իրավական պետության հիմնարար արժեքներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերանայվող դատական ակտի բեկանումից հետո միայն տվյալ գործի էական փաստերի շրջանակներում ներառվող հանգամանքների բացահայտումը կարող է կանխորոշել կայացվելիք նոր դատական ակտի բնույթն ու եզրափակիչ մասի բովանդակությունը:
 - **Սահմանադրական դատարանի եզրակացությունը.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով դատարանին լիազորություն է վերապահում Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայության դեպքում չբեկանել վերանայվող դատական ակտը՝ խնդրո առարկա հանգամանքներն ըստ էության գործի ելքի վրա ազդեցություն չունենալու հիմնավորմամբ, հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածին և 63-րդ հոդվածի 1-ին մասին: Սահմանադրական դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:
-

ՄԴՈ-1792` Հարություն Ներսիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով

- **Քննության շրջանակը.** Արդյո՞ք Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված՝ անձնական ազատության մարդու հիմնական իրավունքի իրացման բոլոր երաշխիքները, այդ թվում՝ կալանքի ժամկետը երկարաձգելիս գործի հանգամանքները պարզելու ուղղությամբ իրավասու մարմինների գործադրած (դրսևորած) պատշաճ ջանասիրության ստուգումը կամ ապահովումը, հավասարապես վերաբերելի են մինչդատական և դատական վարույթներին:
- **Սահմանադրական դատարանի դիրքորոշումը.** Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ անձի հիմնական իրավունքների պաշտպանության երաշխիքները գործում են ոչ միայն մինչդատական, այլ նաև դատական փուլում: Գործի դատարան ուղարկվելը չի կարող այդ երաշխիքների արդյունավետությունը նվազեցնել: Կալանքի կիրառումը պետք է լինի բացառություն՝ հիմնված մեղադրյալի վերաբերյալ օբյեկտիվ փաստերի վրա, և դրա հիմնավորումը ուղղված է ազատության կանխավարկածը հաղթահարելուն՝ անմեղության կանխավարկածի շրջանակում: Ըստ ՄԴ-ի, ազատության մեջ մնալը կանոն է, իսկ կալանքը՝ բացառություն, որը պետք է հնարավորինս սահմանափակ կիրառվի՝ հաշվի առնելով նաև պետության պարտավորությունը ցուցաբերել պատշաճ ջանասիրություն: Կալանքի երկարատև կիրառումը՝ առանց բավարար հիմքերի, կարող է վերածվել պատժի: Սահմանադրությունը և քրեական դատավարության օրենսգրքը հստակ սահմանում են, որ ազատությունից զրկումը չպետք է նպատակ ունենա պատժել: Խափանման միջոցները չպետք է պարունակեն պատժի տարրեր: Վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են գնահատել՝ արդյոք կալանքի հիմքերը դեռ առկա են, և արդյոք դրանք վերագրելի են մեղադրյալին: Եթե դատարանը գտնի, որ կալանքը պետք է դադարեցվի, ապա կարող էր անմիջապես ազատ արձակել անձին՝ Օրենսգրքի 118-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, առանց երկարաձգման «նախապես» որոշման: Սահմանադրական դատարանը արձանագրում է, որ մեղադրյալի կալանքի ժամկետի վաղաժամ երկարաձգման դատական քննությունը՝ կալանքի ժամկետի լրանալուց ամիսներ առաջ, հակասում է թե՛ Սահմանադրությանը, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային: Նման մոտեցումը չի բխում ազատությունից զրկման օրինականության պահանջից, ինչպես նաև խախտում է Օրենսգրքի 118-րդ հոդվածի այն սկզբունքը, որ կալանքը չպետք է պատժի նպատակ հետապնդի: Դատարանն ընդգծում է, որ կալանքի հարցերը քննող դատարանները, անկախ դատավարության փուլից, պարտավոր են ապահովել պատշաճ ջանասիրություն՝ որպես ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը երաշխավորող պահանջ: Սա նշանակում է, որ դատավորները պետք է գնահատեն՝ արդյոք կալանքի հիմքերը պահպանվում են, և թե դրանց պահպանման պատճառը մեղադրյալի վարքագի՞ծն է, թե՞ պետական մարմինների անգործությունը: ՄԴ-ն մերժում է այն պատկերացումը, թե նույն դատարանի՝ և՛ ջանասիրություն դրսևորողի, և՛ դրա ստուգող լինելու հանգամանքը կարող է արդարացնել վերահսկողության բացակայությունը: Պատշաճ ջանասիրության բացակայության հետևանքով կալանքը կարող է վերածվել փաստացի պատժի: Վկայակոչելով կոնկրետ գործը, ՄԴ-ն մատնանշում է, որ դատարանը երկարաձգել է կալանքը այն հիմքով, որ վկաները դեռ չեն հարցաքննվել, այն դեպքում երբ հենց դատական նիստեր չեն անցկացվել, և դատավարական ակտիվ գործողություններ չեն ձեռնարկվել: Վերաքննիչ դատարանն էլ սխալմամբ գտել է, թե դատարանը պարտավոր չէ ապահովել պատշաճ ջանասիրություն: Վերջում Սահմանադրական դատարանը շեշտում է, որ պատշաճ ջանասիրությունը դատարանների վրա դրված պարտականություն է, որը ծառայում է կալանքի որոշումների կամայականությունը կանխելուն: Եթե դատարանը պարտավոր է պատճառաբանել կալանքի հիմքերը, ապա այդ հիմքերի վերացման ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը չի կարող արդարացնել կալանքի շարունակությունը:
- **Սահմանադրական դատարանի եզրակացությունը.** Սահմանադրական դատարանը որոշեց՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ կալանքի ժամկետը երկարաձգելիս վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով պատշաճ ջանասիրության (due diligence) ապահովման պարտականությունը տարածվում է նաև դատական վարույթում գործը քննող դատարանի վրա:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ